



## ՆՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուղիղ և տեսանելի կապ Ձեր աշխատավարձի և ապագա կենսաթոշակի միջև:

*Հին կենսաթոշակային համակարգի դեպքում 100.000 դրամ եւ 60.000 դրամ աշխատավարձ սրացող անձինք, որոնք ունեն միևնույն աշխատանքային արածը, սրանում են միևնույն կենսաթոշակը: Իսկ նոր համակարգի դեպքում Ձեր կենսաթոշակի չափը կախված է Ձեր եւ պետության կողմից Ձեզ համար կատարված կուտակումներից, ինչպես նաև դրանց կառավարումից սրացված եկամուտներից:*

Կենսաթոշակային միջոցները Ձեր սեփականությունն են և ժառանգելի են:

*Մինչև կենսաթոշակային փաթեթին հասնելը կամ դրանից հետո մասնակցի մահվան դեպքում նրա կուտակային միջոցները ժառանգության կարգով փոխանցվում են ժառանգներին կամ, դիմումի հիման վրա, ամբողջությամբ վճարվում նրանց միանվագ վճարի տեսքով:*

Դուք միշտ կարող եք տեղեկություն ստանալ և հետևել Ձեր կուտակած կենսաթոշակային միջոցներին:

*Ի փարբերություն հին կենսաթոշակային համակարգի՝ Դուք կարող եք մշտապես հետևել Ձեր կենսաթոշակային միջոցներին եւ դրանց կառավարմանը:*

Այս շարքից.



# ԿՀԻԿ

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ



## »»> ԽՆԱՅՈՒՄ ԵՆՔ ԲԱՐԵԿԵՃԻԿ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ

Իմացի՛ր ավելին...  
[www.ePension.am](http://www.ePension.am)



«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Հասցե՝ Երևան, 0069, Կարապետ Ուլնեցի 68

060 50 74 00  
060 50 87 00

[ePension@ePension.am](mailto:ePension@ePension.am)



Այս տեղեկատվական թերթիկը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

# ՆՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



## ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

[www.ePension.am](http://www.ePension.am)

# 1


2014 թվականի հուլիսի 1-ից մեկնարկել է

## ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**Եթե Դուք ծնվել եք 1974 թվականին կամ դրանից հետո և վարձու աշխատող եք, նոտար կամ անհատ ձեռնարկատեր, ապա 2014 թվականի հուլիսի 1-ից Դուք ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ համակարգի մասնակից եք:**

**ԿԱՄԱԿՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ** համակարգին կարող է միանալ ցանկացած մարդ, անկախ տարիքից և եկամուտներից:

Բոլոր քաղաքացիները, կուտակային և կամավոր կենսաթոշակներից բացի, ստանալու են նաև **ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ** կամ **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ (ՆՊԱՍՏ):**



## ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ

Կուտակային կենսաթոշակային բաղադրիչն ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ից: Համակարգին մասնակցում են 1974 թվականին և հետո ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Եթե Դուք կուտակային բաղադրիչի մասնակից եք, ապա Ձեր անվանական աշխատավարձից ամսական (եթե անհատ ձեռնարկատեր եք կամ նոտար՝ տարեկան) գումար եք կուտակելու: Պետությունն իր հերթին Ձեզ համար որոշակի գումար է փոխանցելու:

**Այսպիսով, Ձեր կենսաթոշակը նոր համակարգում ձևավորվելու է Ձեր և պետության կողմից Ձեզ համար կատարված կուտակային վճարներից, ինչպես նաև դրանց կառավարումից ստացված եկամուտներից:**

**Պետությունը երաշխավորում է, որ Ձեր կողմից կատարված վճարները վերադարձվելու են Ձեզ՝ ճշգրտված տարեկան գնաճով:**

Եթե Դուք ծնվել եք 1974 թվականից առաջ, Դուք նույնպես կարող եք միանալ կուտակային բաղադրիչին՝ **կամավորության սկզբունքով:** Ընդ որում՝ եթե ծնվել եք 1964 թվականի հունվարի 1-ից հետո և համակարգին կամավոր միանաք մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը, ապա Ձեզ համար պետության կողմից նույնպես կկատարվի համաֆինանսավորում՝ 100 % համամասնությամբ:



## ՈՎՔԵՐ ԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻՆ

Կուտակային բաղադրիչի մասնակիցներն են՝

1. 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ եթե կատարում են սոցիալական վճարներ,
2. մինչև 1974թ. հունվարի 1-ը ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ եթե կամավոր սկզբունքով ստանձնել են սոցիալական վճար կատարելու պարտականություն:

**1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձը իրավունք ունի հրաժարվելու մինչև 2017թ. հուլիսի 1-ը սոցիալական վճար կատարելու պարտականությունից՝ հարկային մարմնին ներկայացնելով համակարգից հրաժարվելու դիմում:**

Սոցիալական վճարներ կատարելուց չեն կարող հրաժարվել՝

Ա. 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված պետական համակարգի բոլոր վարձու աշխատողները:

*Նշված անձինք իրավունք ունեն իրենց սոցիալական փաթեթի գումարը (բացառությամբ առողջապահության փաթեթի համար նախատեսված 52 000 դրամից)՝ որպես սոցիալական վճար, փոխանցել իրենց կենսաթոշակային հաշվին:*

Բ. 2014թ. հուլիսի 1-ից հետո աշխատաշուկա մուտք գործած՝ 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված բոլոր անձինք, ովքեր 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ չեն աշխատել:

*Եթե անձը ծնվել է 1996 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո և 2014թ. հուլիսի 1-ից հետո մուտք է գործում աշխատաշուկա, ապա նրա կողմից վճարվող սոցիալական վճարի գումարը, մինչև 2017թ. հուլիսի 1-ը, նվազեցվելու է մասնակցի եկամտային հարկի գումարից:*